

5. Հանրապետության կոյուղու համակարգ

Ըստ կոյուղու համակարգի շահագործմամբ և կեղտաջրերի մաքրմամբ զբաղվող կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների ամփոփ տվյալների, 2002թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության կոյուղու գլխավոր կոլեկտորի, փողոցային ցանցի և միջբաղային ու միջբակային ցանցի միագիծ ընդհանուր երկարությունները կազմել են 1092.8, 2470.5 և 606.8 կմ, որից քաղաքային բնակավայրերում համապատասխանաբար՝ 1033.8, 2296.5 և 602.8 կմ:


Միագիծ երկարությունն ըստ մարզերի, 2001թ.

(կմ)


	Գլխավոր կոլեկտորի	Փողոցային ցանցի	որից՝ կարիք ունեն փոխման	Միջբաղային և միջբակային ցանցի
ք.Երևան	220.6	398.8	143.6	483.8
Արագածոտն	48.9	107.0	39.0	3.0
Արարատ	95.8	181.0	60.0	7.0
Արմավիր	74.2	220.0	80.0	8.0
Գեղարքունիք	134.1	156.0	53.0	12.0
Լոռի	131.9	359.2	113.2	22.0
Կոտայք	146.8	367.0	99.0	29.0
Շիրակ	52.9	280.0	91.0	21.0
Սյունիք	72.3	197.5	60.0	11.0
Վայոց ձոր	39.6	69.0	19.0	4.0
Տավուշ	75.7	135.0	31.0	6.0
Ընդամենը ՀՀ	1092.8	2470.5	788.8	606.8

2001թ. ընթացքում կոյուղի բաց է թողնվել 148.4 մլն. խոր. մ կեղտաջուր, որից 6.1 մլն. խոր. մ-ն ընդունվել է այլ կոյուղիներից: Մաքրող սարքավորումներով բաց է թողնվել 115.2 մլն. խոր. մ կեղտաջուր, այդ թվում չափորոշային մաքրվածը՝ 98.8 մլն. խոր. մ, ոչ բավարար մաքրվածը՝ 16.4 մլն. խոր. մ: Առանց մաքրման հեռացվել է 39.2 մլն. խոր. մ կեղտաջուր:


Բաց թողնված կեղտաջրերի ծավալն ըստ մարզերի, 2001թ., մլն. խոր. մ




Բաց թողնված կեղտաջրերի ծավալը, 1970-2001թ., մլն. խոր. մ




Մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրերի ծավալն ըստ մարզերի, 2001թ., մլն. խոր. մ



Մաքրող սարքավորումներով բաց թողնված կեղտաջրերի ծավալը, 1970-2001թթ., մլն. խոր. մ



Առանց մաքրման հեռացվող կեղտաջրերի ծավալն ըստ մարզերի, 2001թ., մլն. խոր. մ



Վթարների քանակը կոյուղու համակարգում կազմել է 15618 միավոր, որից ք.Երևանում՝ 4340 կամ 27.8%:

Ֆինանսական ընդհանրացված ցուցանիշները, 2001թ., մլն. դրամ

Կեղտաջրերի հեռացումից ստացված փաստացի եկամուտներ	475.5
որից՝ բնակչությունից	213.1
Ծախսեր, ընդամենը	550.0

Հանրապետությունում կեղտաջրերի հեռացման և մաքրման դիմաց տարիների ընթացքում կուտակվել է 6589.3 մլն. դրամի պարտք, որից բնակչությունից՝ 5776.2 մլն. դրամի կամ 87.7%, իսկ 2001թ.՝ 1154.8 մլն. դրամի, որից բնակչությունից՝ 1070.0 մլն. դրամի կամ 92.7%: Տարիների ընթացքում կուտակված պարտքերի 58.5%-ը բաժին է ընկել ք.Երևանին: 2001թ. այդ ցուցանիշը կազմել է 57.7%: